

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԻԿԱ. ՅՈՒԹՎԱԿՈՒՄ

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հայկական ՍՍՌ ժողովագործության նախագահ

Ստվետական Հայաստանի աշխատավորները, մեծ խանդավառությամբ և օրինական հպարտությամբ դեպի իրենց սոցիալիստական հայրենիքը, դիմավորեցին ՍՄԿՊ ԽՍՀ համագումարին ընկեր Ն. Ս. Խորովչովի զեկուցման թեզիները՝ ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1959—1965 թթ. կոնտրոլ թվերի մասին:

Կոնտրոլ թվերում հաշվի է առնվուամ արտադրողական ուժերի ճշշտ տեղաբաշխման անհրաժեշտությունը երկրի տերիտորիայի վրա՝ բոլոր միութենական ռեսպուբլիկաներում, այդ թվում և Հայկական ՍՍՌ-ում տնտեսական ամենամեծ էֆեկտը ձեռք բերելու նպատակով:

Սովետական Հայաստանն ունի բարձր զարգացման արդյունաբերություն, որը միավորուամ է ժամանակակից տեխնիկայով հագեցված 500-ից ավելի ձեռնարկություն։ Ռեսպուբլիկայի արդյունաբերության տարբերիչ գծերն են նրա բազմանությային բնույթը, աճի բարձր տեխնիկը, տընտեսական սերտ կապերը Սովետական Միության բոլոր շրջանների հետ, ինչպես նաև նրա արտադրանքի արտահանումը արտասահմանյան շատ երկրներ:

Լայնորեն օգտագործելով բնական հարստությունները, ներքին ռեզերվները և կառավարման նոր ձևերի առավելությունները, Հայաստանի էկոնոմիկան առաջիկա յոթնամյակում կստանանոր բուռն զարգացում, մասնավորապես, նրա առաջատար ճյուղը՝ ծանր ինդուստրիան:

Արագ տեխնիկայով կզարգանան ծանր ինդուստրիայի այնպիսի կարևոր ճյուղերը, ինչպիսիք են գունավոր մետալուրգիան և լեռնահանքային արդյունաբերությունը, էներգետիկական, քիմիկական արդյունաբերությունը, մեքենաշինությունը, ոչ էներգա-

ու հաստոցաշինությունը, սարքաշինությունը, շինանյութերի արդյունաբերությունը:

Արդյունաբերության արտադրության տարեկան միջին աճը ռեսպուբլիկայում կազմելու է 12 %, իսկ արդյունաբերության առաջատար ճյուղերում, որոնց միավորում է ժողովրդական տընտեսության խորհուրդը՝ 13 %։ Այդ զգալիորեն բարձր է նախորդ յոթ տարիների աճի տեխնիկական առանց հաշվի առնելու այն հանգամանքը, որ 1959—1965 թթ. արտադրանքի աճի ամեն մի տոկոսն իր ծավալով երկու անգամ զերազանցում է անցած յոթնամյակում աճի մեկ տոկոսին ընկնող արտադրանքի քանակությունից։

Հայաստանի ժողովրդական տնտեսության զարգացման պլանի կարևոր առանձնահատկությունն այն է, որ արդյունաբերական արտադրության մեջ լայնորեն ընդգրկվում են ռեսպուբլիկայի հարուստ բնական հումքային ռեսուրսները՝ գունավոր մետաղների հանքաքարեր, ոչ հանքային հումք, բնական շինանյութեր, ինչպես նաև տեխնոլոգիական էժան քիմիկական հումքի նոր տեսակը՝ բնական գազ, որը 1960 թ. ռեսպուբլիկան ստանարաւ է եղանական Ադրբեջանից։

Հայաստանի Կոմպարտիայի ԽՍՀ համագումարը, որոշելով ռեսպուբլիկայի արդյունաբերության զարգացման ուղիները, անհրաժեշտ գործակում:

Առաջին՝ աստիճանաբար վերացնել այն անհամաշխափությունը, որն առաջացել է արդյունաբերության մեջ էներգատար ճյուղերի շափազանց միակումանի զարգացման հետևանքով, ավելի բարձր տեխնիկայով զարգացնելով մեքենաշինությունը, էլեկտրատեխնիկական արդյունաբերությունը, ճշգրիտ սարքաշինությունը, ոչ էներգա-

տար քիմիական արդյունաբերությունը, գունավոր մետալուրգիան, շինանյութերի, ինչպես նաև թեթև ու սննդի արդյունաբերությունը:

Երկրորդ՝ թույլ շտալ արդյունաբերության մեծ համակենտրոնացում ձեռնարկություններում արդեն հագեցված բնակավայրերում, առանձնապես Երևանում, այն զարգացնելով ամենից առաջ զյուղական շրջաններում և այն քաղաքներում, որտեղ արտադրողական ուժերը համեմատարար ավելի թույլ են զարգացած:

Այս սկզբունքքային դրույթները դրվել են ռեսպուբլիկայի արդյունաբերության զարգացման յոթնամյա պլանի հիմքում: Այսպիսով, յոթնամյակի ընթացքում գյուղական շրջանների արդյունաբերական պոտենցիալը ռեսպուբլիկայի արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալի մեջ զգալիորեն կածի, նույնիսկ Երևանի արտադրության բավական մեծ աճի դեպքում (հիմնականում գործող ձեռնարկությունների ընդլայնման ու վերակառուցման հաշվին):

Արդյունաբերության, գյուղատնտեսության և կուլտուրայի զարգացման կոնտրոլ թվերին համապատասխան, յոթնամյակում Հայաստանի համար նախատեսվում են խոշոր կապիտալ ներդրումներ 12 մլրդ. ռուբլի գումարով: Այս գումարի մեջ չեն մտնում մի քանի միութենական մինիստրությունների և կազմակերպությունների ներդրումները, նույնպես և ներքին աղբյուրների հաշվին կատարվող լրացուցիչ ներդրումները:

Էներգետիկա

Ռեսպուբլիկայի էներգետիկայի հետագա զարգացումով նախատեսվում է ոչ միայն նոր կարողությունների գործարկում, այլև էլեկտրաէներգիայի ստացման աղբյուրների լուրջ որակական փոփոխություններ: Ամենից առաջ է շարք մտնեն 1959 թ. Աթարքեկյանի և 1960 թ. Երևանի հիդրոէլեկտրակայանները, որով և կավարտվի Սևան—Հրազդան կասկադի շինարարությունը: Ռեսպուբլիկայի համար առաջ է շարք մտնեն 1959 թ. Աթարքեկյանի և 1960 թ. Երևանի հիդրոէլեկտրակայանները, որով և կավարտվի Սևան—Հրազդան կասկադի շինարարությունը: Ռեսպուբլիկայի հարավում, Որոտան գետի վրա ավարտվում են նույնպես նախապատրաստական աշխատանքները՝ իր կարողությամբ երկրորդ (Դյումուշի հիդրոէլեկտրակայանից հետո) Տաթևի հիդրոէլեկտրակայանի շինարարությունը սկսելու համար, որը շահագործման կհանձնվի 1965 թ.:

Վառելանյութային-էներգետիկ բազայի զարգացման գործում խոշորագույն գործոն կհանդիսանա 1960 թ. Ղարաբաղ—Աղստաֆա—Երևան գագամուղի կառուցման ավարտումը: Բնական գազը կօգտագործվի ոչ միայն որպես վառելանյութի և էլեկտրաէներգիայի աղբյուր, այլև որպես արժեքավոր տեխնոլոգիական հումք՝ զարգացող քիմիական արդյունաբերության համար: Բնական գազի բազայի վրա մոտակա տարիներին կկառուցվեն Երևանի և Ախտայի շերմային էլեկտրակայանները: Բնական գազը կօգտագործվի նաև Երևանի, Ախտայի, Դիլիջանի, Մամանի, Սևանի, Ախտայի, Լուսավանի, Արզնու և այլնի բնակչության կոմունալ-կենցաղային կարիքների համար: Յոթնամյակի ընթացքում գազ կստանան Կիրովականը, Լենինականը, Ալավերդին, Արարատը և այլն:

Դրա հետ միասին, կառուցվի Աղստաֆա—Երևան էլեկտրահաղորդման բարձրավոլու գիծը, որը 1960 թ. կապահովի էլեկտրաէներգիայի հաղորդումը Աղբբեշանական էներգոսիստեմից Հայկական էներգոսիստեմին:

Այս ամենը 1965 թ. կտա էլեկտրաէներգիայի սպառման աճ՝ 1,8 անգամ, 1958 թ. համեմատությամբ:

Այդ վիթխարի ծրագիրը ունալ պայմաններ կստեղծի Սևանա լճի ջրերի դարավոր պաշարների բացեղողումը գրեթե 3 անգամ կրճատելու համար, այսինքն՝ 1965 թ. Սևանա լճից ջուր բաց կթողնվի ոչ թե էներգետիկ, այլ ոռոգման գործիկով, այնքան, որքան անհրաժեշտ է Արարատյան դաշտավայրի հողերը ոռոգելու համար, ջուրը նախապես օգտագործելով Ալան—Հրազդան կասկադի հիդրոէլեկտրակայաններում: Ջրերի բացեղողումը հասցնելով տարեկան մինչև 500 մլ. մ³, և իրագործելով, նրանց հետագա կրճատումը, կարելի կլինի լինը պահպանել ըստ հնարավորության իր բնական պայմաններին մոտ վիճակում:

Մեծ աշխատանքներ կատարվեն ռեսպուբլիկայի մյուս գետերի վրա կառուցված մի քանի համեմատաբար մանր հիդրոէլեկտրակայանների կարողություններն ընդլայնելու և ավելի էֆեկտիվ օգտագործելու համար: Մեծ աշխատանքներ տնտեսությունը էլեկտրաէներգիայով

նորմալ մատակարարելու համար կկառուցվեն 25 ցածրացնող ենթակայաններ 700 հազ. կվա կացածրությամբ, և էլեկտրահաղորդման գծեր ավելիքան 600 կմ երկարությամբ:

Աղբերեցանի և Վրաստանի էներգոսիստեմների հետ նախատեսվող կապի կենսագործումը կավարտի Անդրկովկասի միացյալ էներգետիկ սիստեմի ստեղծումը: 1959—1965 թթ. Հայաստանի էներգետիկայի այսքան հզոր զարգացումը կարելվորագույն գործոն հհանդիսանա ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի բուրն աճի համար:

Գումավոր մետաղուրգիա և լեռնահանքային արդյունաբերություն

Յոթնամյակում իր զարգացման մեջ խոշոր թըրի կատարի գումավոր մետալուրգիան, որի համախառմա արտադրանքի ծառալը կալելանա մոտ երեք անգամ: Այդպիսի արագ զարգացման համար հիմք կհանդիսանա ամենից առաջ պղընձա-մոլիբդենային, պղնձյա և պոլիմետաղական կոմպլեքսային հանքավայրերը, ինչպես նաև միներալային հումքի վերջերս հայտաբերված միշտը նոր տեսակների խոշոր հանքավայրերը:

Գումավոր մետաղների արտադրության աճը կապահովվի հանքագարերի հանույթի և վերամշակման ընդլայնման միջոցով գործող ձեռնարկություններում՝ Քաջարանի և Դաստակերտի պղնձա-մոլիբդենային կոմբինատներում, Ղափանի և Շամլուղի պղնձի հանքերում, Ախթալայի պոլիմետաղական հանքավայրում: Կորկնապատկվի Քաջարանի կոմբինատի հարստացնող ֆարմիկայի կարողությունը. այստեղ հանքավայրերի ստորերկրյա արդյունահանումը լրիվ կփոխարինվի բաց աշխատանքներով, որով երկու անգամ կվրճատվի արդյունահանվող հանքագարի ինքնարժեքը:

Մոտակա տարիներին շարք կմտնեն Շամլուղի և Ախթալայի պղնձի-կապարի-անագի հանքագարերի հարստացնող հզոր ֆարմիկան, ինչպես նաև Ագարակի պղնձա-մոլիբդենային կոմբինատ: Դրանով կ 1965 թ. պղնձի կոնցենտրատների արտադրությունը 1958 թ. համեմատությամբ կաճի մոտ 2,4, մոլիբդենային կոնցեն-

տրատներինը՝ 3,5 և կապարի կոնցենտրատներինը՝ 5 անգամ: Մրագրվում է Ալավերդու պղնձաձուման արտադրության արմատական վերակառուցումն ու ընդլայնումը: Այդ ամենը, հաշվի առնելով պղնձի կոնցենտրատի մատակարարումը հարևան տնտեսական շրջաններից, թույլ կտայիթնամյակում պղնձի արտադրությունն ավելացնել 3—4 անգամ:

Հեռանկարային պլանում կարևոր տեղ է հանդիպում նաև հազվագյուտ և ցրված էլեմենտներին, այդ թվում՝ սելենին, տելուրին, գերմանիումին, ունիումին և այլնին, հաշվի առնելով նրանց մեծ գերբ տեխնիկայի շատ ճյուղերի զարգացման գործում, առանձնապես էլեկտրոնիկայում, ուղիղության համար, տելեմեխանիկայում և ավտոմատիկայում:

Հայաստանի երկրաբանների շանքերով երևան են հանվել բնածին ոսկու բուն հանքավայրեր, մասնավորապես, Բասարգելարի շրջանում, որն ունի բավականաչափ պաշարներ՝ մոտակա տարրիներին արդյունաբերական շահագործում կազմակերպելու համար:

Ալյումինի արդյունաբերության զարգացումը մի ժամանակ Հայաստանում հիմնվում էր ուսուցությունը արտադրությունը էժան էլեկտրաէներգիայի վրա, թեպետև հումքը՝ կիսաֆարիկատ կավառողը, ներմուծվում է հեռավոր Ուրալից: Ներկայումս հայտնագործված են նեֆելինային սիենիտների խոշոր կուտակներ, որոնք կարող են հաջողությամբ փոխարինել ալյումինի հիմնական հումքին՝ բռքիտներին: Նեֆելինային սիենիտներից, կավառողի հետ զուգընթացաբար, կըստացվեն մի ամբողջ շարք ոչ պակաս կարևոր պրոդուկտներ՝ պորտլանդ-ցեմենտ, նատրիումի և կալցիումի մետասիլիկատ և այլն: Այսպիսով, նեֆելինային սիենիտներն ունեն խոշոր ժողովրդատնտեսական նշանակություն: Քանաքեռի ալյումինի գործարանը տեղական հումքով ապահովելու հետ միասին կլուծվի ալյումինի արտադրության հետագա ընդլայնման հարցը: Այդ դեպքում ստացվող կողմնակի պրոդուկտները, բացի ժողովրդական տնտեսության տարրեր ճյուղերում անմիջականորեն օգտագործելուց, հնարավորություն կտան մեծ շափով ընդլայնել բետոնի և երկաթբետոնի հավաքովի շինարարական

կոնստրուկցիաների թողարկումը, կազմակերպել բյուրեղապահու, թափանցիկ ապահով, ջնարակի, մաքուր կավահողի և մյուս առարկաների արտադրությունը: Մոտակա տարիներին Ախտայի շրջանոմ, Ջրառատ գյուղի մոտ, նեֆելինային սիենիտների հիման վրա կառուցվելու է լեռնաքիմիական խոշոր կոմքինատ:

Վերջին ժամանակներս մեր երկրարաններն արել են երևանի և Քանաքեռի սարահարթի տակ, մինչև 450 կմ² տարածության վրա ձգվող կերակրի քարաղի խոշորագույն հանքավայրի հայտնագործումը: Աղը բարձրորակ է, նրա ընդհանուր երկրարանական պաշարները հասնում են մինչև 220 մլրդ. տ: Կերակրի աղի հանքավայրեր են գտնված նաև Հոկտեմբերյանի շրջանում: Այս հայտնագործումների ժողովրդա-տնտեսական նըշանակությունը մեծ է, հատկապես, եթե հաշվի առնենք քիմիական արդյունաբերության ինտենսիվ զարգացումը: Ներկայամ կառուցվում է Ավանի աղի հանքարանը և մշակման գործարանը: Երևանի աղ սպառող քիմիական ձեռնարկություններն այն կտանան աղաջրի ձեռվ, անմիշապես գետնի տակից, որի համար Հրազդան գետի աջ ափին կառուցվում է հատուկ ձեռնարկություն:

Ցոթնամյակի ընթացքում իրագործվող երկրախուզական աշխատանքների արդյունքների հիման վրա կլուծվի Զանգեզուրում երկաթաքարերի արդյունահանման ու ձուլման և Սևանա լճի հյուսիս-արևելյան ափի խղոմիտի կուտակների շահագործման հարցը:

*իմիական արդյունաբերություն

Հետագա բուռն զարգացում կտանա ուսուցրիկայի քիմիական արդյունաբերությունը, որը կդառնա հումքի կարևորագույն աղբյուր ժողովրդական սպառման բարձրորակ և էժան առարկաների արտադրության խիստ ընդլայնման համար: Մեծ հեռանկարներ են բացվում նաև շինարարության մեջ, հատկապես բնակարանային շինարարության և կահույքի արտադրության մեջ, այդ նյութերի կիրառման համար:

Քիմիական արդյունաբերության զարգացման տարիերի գիծը աճի բարձր տեմպերն են: 1958 թ. քիմիական արդյունաբերության արտադրանքի ծավալը նախորդ տարվա համեմատու-

թյամբ ավելացավ 24 %-ով, իսկ 1965 թ. այն կերպազանցի 1958 թ. մակարդակից՝ 3,3 անգամ, այդ թվում՝ սինթետիկ պրոդուկտներինը մոտավորապես ինն անգամ:

Ացետիլենի ստացումը բնական գազից կթուղլատի մոտակա տարիներին երկանում դադարեցնել կարբիդի էներգատար արտադրությունը: Առանց էլեկտրաէներգիայի ծախսման ավելացման դա կտա ացետիլենի աճ ավելի քան երկու անգամ, կրկնակի կիշեցնի նրա ինքնարժեքը:

Բնական գազից ստացվող ացետիլենի բազայի վրա նախատեսվում է ավելացնել սինթետիկ կառուղուկի և կառուստիկ սողայի թողարկումը 2 անգամ, վինիլացետատինը՝ 5,5 անգամ, քացահաթավակերպել ացետիլեցվովի և նրա բազայի վրա ացետատային մետաքսի, պոլիբրովինիլային խեժերի և նրանցից պատրաստվող զանազան առարկաների, վինիֆլեքսի, պոլիվինիլբռուտիրալի, լաքերի և այլնի արտադրությունը:

Նախատեսվում է նաև ստեղծել քլորվինիլային խեժերը պատրաստի առարկաների վերամշակելու արտադրությունը: Ինչպես հայտնի է, այդ հոմքից կարելի է պատրաստել ներբաններ, գալանտերեալի պլաստիկատ, սփոռցներ; վերակուներ, լինոլեում, շինարարական-վերջնամշակման նյութերը ու սանտեխնիկական սարքավորումը: Այդ խեժերը հաջողությամբ կկիրառեն նաև իրրև մեկուսի նյութեր կաբելային արտադրության մեջ:

Ախտայի շրջանում կկազմակերպվի կապոնային կորդի արտադրություն, որը հետագայում կթողարկի կապրոնային մանվածք՝ գուլպաների և տրիկոտաժալին մյուս գործվածքների արտադրուման համար: Ավտոդողերի արտադրության մեջ կապրոնային կորդը կփոխարինի բամբակե կորդին, որով կտնտեսվի (1965 թ. արտադրության մասշտաբներով) տարեկան մոտ 25 հազ. տ բամբակե հումք, այսինքն՝ մեր ուսպուրլիկայում ամեն տարի մթերվող բամբակե գրեթե ողջ քանակությունը: Բացի դրանից, այն կկրծատի կառուկի ծախսումը 15—20 % -ով, միաժամանակ ավելացնելով ավտոդողերի վաղքը 40 % -ով:

«Պոլիվինիլացետատ» գործարանը մոտ ապագայում կթողարկի մեկուսի լաքի նոր տեսակ, որը թույլ կտա զարդարեցնելու մանվածքի, ուստինի-

և բուսական յուղի ծախսումը փաթուզֆային հա-
ղորդարերի մեկուսացման համար և 15 % -ով
կրճատի մետաղի ծախսումը էլեկտրաշարժիչներ
պատրաստելիս: Այս ամենը ժողովրդական տղն-
տեսության համար կտնտեսի հարյուրավոր մի-
լիոն ռուբլիներ:

Կիրովականում կառուցվում է և 1961 թ. շա-
հագործման կհանձնվի ացետատային մետաքսի
գործարանը, որի արտադրանքը կիրովատրի ավե-
լի ընդլայնել մետաքսագործական, տրիկոտաժի
և կարի արտադրությունը: Կիրովականի քիմիա-
կան կոմբինատում մոտակա մեկ-երկու տարում
շարք կմտնեն մելամինի և սինթետիկ կորունդի
արտադրման գործարանները:

Միջոցառումներ են մշակվում Կիրովականում
ամոնիակի արտադրությունը ապագայում բնա-
կան գազի վրա փոխադրելու համար: Բնական
գազի օգտագործումը ամոնիակի և ացետիլենի
ստացման համար հնարավոր կարգնի ավելաց-
նել ամոնիակի սելիտրայի թողարկումը և կազ-
մակերպել ակրիլո-նիտրիլային թելքի՝ նիտրոնի
(արհեստական բուրդ), միզաթթվի և ամոնիակի
սուլֆատի արտադրությունը:

Ցորենամյակի ընթացքում գործող ձեռնարկու-
թյուններում մեկուկես-երկու անգամ կավելանա
ռեստինե տեխնիկական առարկաների, ավտոգողե-
րի, լաքերի ու ներկերի, օլիֆի, զարդարերի, աղա-
թթվի և քիմիական այլ պրոդուկտների թողար-
կումը: Մեծ զարգացում կստանա նաև քիմիա-
կան արդյունաբերության այն մասը, որը բազ-
արվում է գումավոր մետալորդիայի վրա և թո-
ղարկում ծծմբաթթու, պղնձի արջասպ և սուլֆեր-
ֆոսֆատ:

Ընթացիկ հնդամյակում Հայաստանում ծրա-
գըրվում է կառուցել քիմիական ռեակտիվներ,
գեղագործական պրեպարատներ արտադրելու ձեռ-
նարկություններ և կագմակերպել տեխնիկական
բիոմիցինի՝ անասունների բուժման և նրանց աճի
արագացման պրեպարատի արտադրությունը:

Քիմիական արդյունաբերության հետագա
զարգացման այս ընդարձակ ծրագրի հաջող կեն-
սագործումը կապահանջի համապատասխանորհն
ծավալել գիտա-հետազոտական և փորձնական-
նախագծային աշխատանքներ:

Մեքենաշինություն և հաստոցաշինություն

Մեքենաշինությունը և հաստոցաշինությունը
Հայաստանի արդյունաբերության առաջիկա զար-
գացման մեջ կրնեն առաջատար տեղերից մեկը:
Այժմ տնտեսության այդ ճյուղերի արտադրանքի
տարեկան միջին աճը հասնում է արդեն 22—23
% -ի, իսկ յոթնամյակում նրանց արտադրանքի
ընդհանուր ծավալը կաճի մոտավորապես 3,5
անգամ: Հատկապես արագ տեմպերով կզարգա-
նա հաստոցաշինական և գործիքաշինական ար-
դյունաբերությունը: Մետաղահատ հաստոցների
թողարկումը կավելանա մոտավորապես 7 ան-
դամ:

Նման արագ աճն ապահովերւ համար, Երե-
վանի Ֆ. Է. Զերժինսկու անվան և Հոկտեմբերյանի
գործող գործարանների ընդլայնման հետ միասին,
արդեն 1959 թ. շաբթ կմտնեն ֆրեզերային հաս-
տոցների գործարանը, ներտաշիլ հաստոցների
գործարանը, հղկիլ հաստոցների գործարանը,
ժամացուցի արդյունաբերության և սարքաշի-
նության համար անհրաժեշտ ճշգրիտ հաստոցնե-
րի գործարան: Դրանով իսկ Հայաստանը մոտա-
կա 2—3 տարում կդառնա մետաղամշակման
հաստոցների արտադրության գծով երկրի գիսա-
վոր տնտեսական շրջաններից մեկը:

Բոլոր հաստոցաշինական գործարանները կհա-
գեցվեն նորագույն տեխնիկայով, բարձր արտա-
դրողականության ագրեգատներով և մասնագի-
տացված հաստոցներով, հավաքող կոնվեյերնե-
րով և մեքենայացված ստենդներով:

Մոտակա տարիներին կընդարձակվի Երևանի
ավտոմեքենաների պահեստամասերի գործարա-
նը, որտեղ արտադրանքի թողարկումը կավելանա
երեք անգամ: Զգալիորեն կընդլայնվի նոր կոնս-
տրուկցիայի հեծանիվների արտադրությունը լե-
նինականի գործարանում:

Կավելանա կոմպրեսորների, կենտրոնախուլս
պոմպերի, ամբարձիլ մեխանիզմների, մամլիչ-
ների և քարամշակման մեքենաների, քիմիական
ու սննդի արդյունաբերության համար անհրա-
ժեշտ տեխնոլոգիական սարքավորման, գյուղա-
տնտեսական ինվենտարի և այլ թողարկումը:

Ռեսպուբլիկայի բնակարանային շինարարու-
թյան կարիքներն ապահովելու համար էլարում
նախատեսվում է զեռուցման կաթսաների և ուա-

դիատորների գործարանի կառուցումը: Եռևավանում կառուցվելու է ոչ ստանդարտ սարքավորման գործարան: Ախտայի շրջանում, Բջնի գյուղի մոտ, 1959 թ. ստեղծվում է գազային ապարատուրայի արտադրություն խոհանոցային սալիկների, վանաների սյունակաթսաներ և տնային գործածության այլ առարկաներ թողարկելու համար:

Ինակը լության կարիքները մահճակալների, մետաղյա ամանեղների, մասղացների, և տնային գործածության շատ որիշ առարկաների գծով ապահովելու համար, ժողովնախորհի ձեռնարկությունների հետ միասին, մասնակցություն կրանենա նաև տեղական Սովորությունը և արհեստագործական կոռարեացիայի արդյունաբերությունը:

Հուրց ուշադրություն կդարձվի թողարկվող մեքենաների, հաստոցների, սարքավորման և ծողովրական սպառման առարկաների կոնստրուկցիաների կատարելագործման և որակի բարձրացման վրա:

Էլեկտրատեխնիկական արդյունաբերություն

Առաջիկա յոթնամյակում ուսապուլիկայի էլեկտրատեխնիկական արդյունաբերության արտադրանքի ծավալը կաճի մոտ երեք անգամ: Արտադրանքի աճի հիմնական մասը կստացվի ներկայումս գործող ձեռնարկություններում՝ Վ. Ի. Լենինի անվան Հայէլեկտրագործարանում, Երևանի և Լենինականի էլեկտրատեխնիկական գործարաններում, Երևանի էլեկտրաշարժիչների, էլեկտրալուսավորման արմատուրայի, էլեկտրաապարատուրայի և կարելի գործարաններում նրանց ընդլայնման և ավելի կատարելագործված տեխնոլոգիական սարքավորումով հագեցնելու միջոցով:

1959—1965 թթ. Լենինականում և Գորիսում շարք կմտնեն միկրոէլեկտրաշարժիչների գործարանները՝ տարեկան 450 հազ. շարժիչ թողարկելու գումարային կարողությամբ, իսկ 1961 թ. Սևանի շրջանի Մաղկոմք գյուղում շահագործման կհանձնըվի էլեկտրական մեքենաների արտադրության մեջ կիրառվող ապակեթելքի և էլեկտրատեխնիկական ապակեմանվածքի գործարանը՝ կարելացին սուարկաների, էլեկտրական մեքենաներում կիրառվող փաթութային հաղորդալրերի արտա-

Պաստմասսայի առարկաների աճող պահանջմանը էլեկտրատեխնիկայում բավարարելու համար, բացի էջմիածնի պատմասսաների գործարանի ընդուացնումից, խոշոր մասշտաբով կիազմակերպվի պոլիբլորվինիլացին առարկաների թողարկումը, որոնք պատրաստվելու ևն Հայաստանի քիմիական արդյունաբերության արտադրած խեթերից:

Այդ բոլոր միջոցառումները թույլ կտան 1965 թ. կաբեների թողարկումն ավելացնել 3,5 անգամ, ուժային տրանսֆորմատորներինը՝ 2,2 անգամ, փոխադրովի էլեկտրակայաններինը՝ 1,5 անգամ, զեներատորներինը և էլեկտրաշարժիչներինը՝ մոտավորապես 2 անգամ, էլեկտրալուսավորման արմատուրայինը՝ ավելի քան 5 անգամ՝ 1958 թվականի մակարդակի համեմատությամբ: 1959 թ. էլեկտրալամպերի գործարանի շինարարությունը ավարտելուց հետո նրա արտադրանքը կաճի 2,3 անգամ: Զգալիորեն կավելանա լայն սպառման առարկաների՝ էլեկտրաարդուկների, էլեկտրավլիտաների, պլաստմասսայից պատրաստվող տնային գործածության առարկաների, տաճածառի զարդարանբների և այլ արտադրությունը:

Սարքաշինություն

Ռեսպուլիկայի սարքաշինական արդյունաբերությունն այժմ ներկայացնում են ժամացուցի գործարանը և էլեկտրանշգրիտ գործիքների գործարանը, որոնք թողարկում են միլիամպերմետրեր, ցածրափուտ հոսանքաշափիչ աքցաններ, բարձր լարման ցուցիչներ և ցածր լարման հոսանքափնտրիչներ, ինչպես նաև Երևանի, Լենինականի և Կիրովականի նոր սարքաշինական գործարանները:

Երևանի սարքաշինական գործարանը թողարկում է մասսայական մասշտաբով լայն գիտագործի գալվանոմետրեր և լոգոմետրեր: Կիրովականի «Ավտոմատիկա» գործարանն ավարտում է յուրացման ժամանակաշրջանը՝ և 1959 թվականի սկզբից թողարկելու է ավտոմատիկ կարգավորող տարեկան տեսակի էլեկտրոնային սարքեր, իսկ Լենինականի գործարանը պատրաստվում է արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակություն ունեցող խոնավաշափիերի արտա-

թյանը՝ պինդ, հոսուն և գալանման մարմինների խոնավությունը շափելու համար:

Սեանում կաղմակերպվում է գործադիր մեխանիզմների արտադրություն՝ շերմատեխնիկական, քիմիական և այլ արտադրությունների ավտոմատացման կարիքների համար:

1959 թվականից Երևանի ժամացույցի գործարանը, զարթուցիչ ժամացույցների հետ զուգընթաց, արտադրելու է գեղարվեստորեն ձևավորված (մասամբ ազնիլ մետաղներից, թանկարժեքքարերով) ձեռքի ժամացույցներ, որոնց թողարկումը յոթնամյակի վերջում հՀամար մինչև 500 հազ. հատի, իսկ լուրոր ժամացույցները միասին վերցրած՝ տարեկան 2500 հազ. հատի: Այս լայն ծրագրիը կատարելու համար նախատեսվում է գործարանի ընդարձակումը:

Սարքաշինությունն ու ավտոմատացման միջոցները կոմպլեկսավորող դետալներով և մասերով ապահովելու նպատակով ստեղծվում են մի շարք հարակից օժանդակ արտադրություններ: Այսպես, Արդիում կառուցվում է ժամացույցի և սարքաշինական արդյունաբերության համար տեխնիկական ճշգրիտ քարերի գործարան: Երևանում էլեկտրաչափիչ գործիքների համար ստեղծվում է բազմատեսակ մետաղակերամիկական կոնտակտների, կոնստրուկտիվ դետալների և հատուկ մագնիսների թողարկումը: Բովանայանում (Ալավերդու շրջանում) ստեղծվում է էլեկտրատեխնիկական և սարքաշինական արդյունաբերության կարիքների համար էլեկտրակերամիկական իրերի արտադրություն:

Յոթնամյակի ընթացքում սարքաշինության, ինչպես նաև ավտոմատացման միջոցների արտադրության ծավալը կավելանա ավելի քան 7 անգամ:

Խաղիուտեխնիկական արդյունաբերություն

Ռադիոտեխնիկական արդյունաբերությունը ծանր ինդուստրիայի նոր, կարևոր ճյուղն է, որը ծնունդ է առնելու Հայաստանում առաջիկա լոթնամյակում:

Ծենանյութերի արդյունաբերություն

Ծովագրվում է շինանյութների արդյունաբերության արտադրանքի ծավալի ավելացումը ավելի քան 2,3 անգամ, Բնական շինանյութերի՝ տուժի,

բազալտի, պեմզայի, գրանիտի արտադրության ավելացման հետ միասին զգալիորեն կընդարձակվի յեմենտ-շիֆերի, ինչպես նաև ապակու և հախճապակու նենապակու արտադրությունը:

Առաջիկա յոթ տարվա ընթացքում կառուցվեն նոր ձեռնարկություններ և կկազմակերպվի մի շարք նոր առարկաների արտադրությունը, ինչպես, օրինակ, ասրուցեմենտային խողովակներ՝ Արարատի ցեմենտա-շիֆերային կոմբինատում, սանիտարական հախճապակու իրեր և կերամիկական խողովակներ՝ Երևանի շինանյութերի կոմբինատում: Եշի տարայի թողարկումը կավելանա 1958 թ. 16 մինչև 118 մին 1965 թ.:

Եինանյութերի արդյունաբերության ընդլայնման համար մեծ նշանակություն կունենա Ախատայի լեռնաքիմիական կոմբինատի կառուցումը, որի գործարկումը հետո ոեսպութիկայում ցեմենտի արտադրությունը կավելանա մի քանի անգամ:

Խիստ կավելանա նույնպես երկաթբետոնի և բետոնի շինարարական կոնստրուկցիաների արտադրությունը, որը կնպաստի արդյունաբերական և բնակարանային շինարարության բուռն աճին:

Թերե արդյունաբերություն

Յոթնամյակում ոեսպութիկայի թեթև արդյունաբերության արտադրանքը կաճի մոտավորապես 1,7 անգամ: Նախատեսված աճը կապահովվի գյուղատնտեսական հումքի արտադրության և, հատկապես, արհեստական ու սինթետիկ նյութերի արտադրության շեշտակի ավելացման հաշվին:

Ոեսպութիկայի թեթև արդյունաբերության աշխատողների առաջ կարևոր հարց է դրված՝ մոտակա մի քանի տարում այնքան ընդլայնել մանածագործական, տրիկոտաժի, կարի և կոշիկի արտադրության կարողությունը, որպեսզի կարելի լինի սինթետիկ հումքի նոր տեսակները լիովին վերամշակել պատրաստի իրերի:

Մոտակա տարիներին կառուցվող և շահագործման հանձնվող նոր ձեռնարկություններից պետք է նշել իջևանի գորգերի կոմբինատը՝ տարեկան մոտ 700 հազ. մ² գործարանային փորդ կարողությամբ, նրանց արտադրության մեջ, բրդի հետ

միասին, կիրառվելու են ավելի ամուր և բարձրական արհեստական թելեր:

1959 թ. շարք կմտնեն Զարբախի ձեռնոցների գործարանը՝ տարեկան 7 մլն. զուգ ձեռնոց արտադրելու առավելագույն կարողությամբ: Դիլիջանում կառուցվի տրիկոտաժի ֆաբրիկան, իսկ Երևանում նոր կարի գործարանը: Տրիկոտաժի ֆաբրիկաները բարձրարանը: Տրիկոտաժի ֆաբրիկաների մանվածքով ապահովեր համար ծրագրվում է կենինականի սանրային մանվածքի ֆաբրիկայի շինարարությունը:

Նշած միջոցառումները կենսագործելու շնորհիվ 1965 թ. արտադրանքի հիմնական տեսակների արտադրությունը, բնական արտահայտությամբ, 1959 թ. համեմատությամբ կավելանահետեւյալ չափով՝ բամբակյա գործվածքները՝ մոտ 1,3 անգամ, բրդյա գործվածքները՝ 1,7 անգամ, մետաքսյա գործվածքները՝ 1,8 անգամ, կաշվեկոշեղենը՝ 1,7 անգամ, կարի արտադրությունը՝ 1,4 անգամ, գորգերը և գորգեղենը՝ ավելի քան 5 անգամ: Զգալիորեն կավելանա նաև գոլպաների, տրիկոտաժային, գալանտերեալի և ժողովրդական սպառման այլ ապրանքների թողարկումը: Կյուրացվի նոր տեսակի իրերի արտադրությունը, այսպիս, օրինակ, նեֆելինային սինիտների վերամշակման ժամանակ ստացվող օժանդակ նյութերից մեկի՝ երևանիտ կավահողի բազայի վրա, 1962 թ. կտտեղծվի բլուրեղապակու իրերի և տեսակավոր ամանեղենի արտադրությունը: Մինչև Ախտայի լեռնա-քիմիական կոմբինատի շահագործման հանձնումը, այս նոր արտադրությունը անհրաժեշտ հումքով կապահովի կավահողի փորձնական գործարանը:

Անտառային և փայտամշակման արդյունաբերություն

1965 թ. կահույքի արտադրությունը կամի մոտ 2 անգամ: Կառուցվի կահույքի նոր մեծ գործարան, որը շահագործման հիմնավոր 1965 թ.: Կահույքի արդյունաբերությունը հիմնական և օժանդակ նյութերով ապահովելու համար նախատեսվում է կառուցել հջեանի փայտամշակման գործարանի փայտատաշեղալային սալերի ցեխը, այն շահագործման հանձներով 1960 թ., ինչպես նաև ոեսպութիկայի ձեռնարկությունների փայտի մնացուկների բազայի վրա՝ փայտա-թելքավոր սա-

լերի արտադրության գործարան, այն շահագործման հանձներով 1964 թ.: Մինչև 1963 թ. կառուցվելու է նույնական հայելիների նոր գործարան: Եղանակում կազմակերպվում է պարկետի արտադրություն: Այս միջոցառումները թույլ կտան հայելիների արտադրությունն ավելացնել 1,7 անգամ, պարկետինը՝ նույնքան անգամ, սունձի փաներինը՝ 2 անգամ:

Կահույքի թողարկումն ավելացնելու հետ միաժամանակ մեծ ուղարկություն կդարձվի արտադրանքի ասորտմենտի ընդլայնման և որակի բարձրացման վրա: Խիստ կավելանա փոքր գարդիտային, կոմբինացված, ինչպես նաև ներկառուցված կահույքի արտադրությունը:

Բնակչության կուլտուրական պահանջները բավարարելու գործում նշանակալից իրադարձություն կհանդիսանա զաշնամուրի արտադրության կազմակերպումը երևանում: Այս նպատակով Զարբախում կառուցվող գործարանը նախատեսված էր ներմուծվող կոմպլեկտավորող դետաներից դաշնամուրներ հավաքելու համար: Սակայն այժմ միջոցներ են ձեռնարկված տեղում բոլոր դետաները պատրաստելու և տարեկան մինչև 10 հազ. զաշնամուր հավաքելու համար, սկզբում նախատեսված 3 հազարի փոխարեն: Գաշնամուրի գործարանը շահագործման հիմնավոր 1960 թ.:

Ցոքնարյակում Հայաստանի անտառային և փայտամշակման արտադրության համախառնողը արտադրանքը կավելանա մոտավորապես 1,8 անգամ:

Սննդի արդյունաբերություն

Անասնաբուժության արտադրանքի (մսի և կաթի) անշեղ աճը պահանջում է կարճ ժամանակամիջոցում ստեղծել նոր կարողություններ՝ այն վերամշակելու համար: Մսի արտադրությունը սեփական ոեսպուրսներից, շաշված ներմուծվող անասնահումքի վերամշակումը կենինականում, յոթնամյակում կավելանա մոտ 1,7 անգամ: Ելեկով դրանից, նախատեսվում է լիովին ավարտել երևանի մսի նոր կոմբինատի շինարարությունը և ընդլայնել սառնարանային տարողությունները: Երշիկեղենի արտադրությունը կամի մոտ 2,3 անգամ, իսկ մսի պահածոներինը՝ 3,3 անգամ: Զգալիորեն կավելանա մսի կիսափարփկատների թողարկումը:

Կաթի գնումների աճին համապատասխան, պանրի և անբաշ կաթնամթերքների արտադրությունը կավելանա առնվազն 2,5 անգամ, կենդանական յուղինը՝ մոտ 1,4 անգամ: Կկառուցվեն ու շահագործման կհանձնվեն կաթի գործարաններ Ալավերդում, Զերմուկում, Դիլիջանում և Ղափանում, պանրի գործարաններ՝ Յանդում, Աղիղբեկովում, Բասարգեշարում, պանրի պահանում, Երևանում, Լենինականում և Կիրովականում:

Յոթնամյակում գինու արտադրությունը կավելանա 1,9 անգամ և կհանի 5,2 մլն. դկլ. շամպայնինը՝ 500 հազ. դկլ., կոնյակինը՝ 300 հազ. դկլ. Խաղողի վերամշակումը յոթնամյակի վերջում կգերազանցի 100 հազ. տ.-ից:

Կոտեղծվեն վերամշակման նոր կետեր Նորակերտում, Այգեստանում, Այգավանում, Արենիում, Իջևանում և Շամշադինում:

Երևանի գինու կոմբինատի և մյուս գինեգործական ձեռնարկությունների նկուղների ընդայնման հետ միասին նախագծվում է գինու նոր գործարաններ կառուցել Արագայանում, Նոյինբերյանում և Այգր լուսում: Կոնյակի սպիրտի թորման գործարաններ կկառուցվեն Հոկտեմբերյանում, Բուրաստանում, Դավալուսում և Դվինում:

Գինեգործության մնացուկները լրիվ օգտագործելու և նրանցից արժեքավոր արտադրանք՝ գինեգարային թիւ, արտադրելու համար ներկայումս կառուցվում է նոր գործարան, որը շահագործման հանձնելուց հետո գինեգարային թիւի արտադրությունը կհանի մինչև 200 տ.-ի՝ 1958 թ. 35 տ.-ի դիմաց:

1965 թ. պահածոների արտադրության արտադրանքը կհանի մինչև 130 մլն. պայմանական տուփի: Նման աճն ապահովելու համար նախատեսվում է ընդլայնել գործող, հատկապես, Երևանի և Հոկտեմբերյանի գործարանները, ինչպես նաև կառուցել պահածոների նոր գործարաններ Այրում, Հրազդանում, Շամշադինում և Իջևանում:

Գարեջրի արտադրության մեջ կընդայնվեն

գործող գործարանները և կկառուցվեն գարեջրի երկու նոր գործարան Ղափանում և Սևանում, ինչպես նաև ածիկի պատրաստման գործարան՝ Լենինականում: Դա հնարավոր կործանի գարեջրի արտադրությունն 1958 թ. 1,8 մլն. դկլ-ից հասցել 1965 թ. մինչև 3 մլն. դկլ:

Հանքագրերի լցումը գրեթե կրկնապատկվի և յոթնամյակի վերջում կհանի մինչև 80 մլն. 22ի: Կընդարձակվի մրգապտղային հյութերի և ոչ տփելից խմիչքների արտադրությունը:

1959 թ. սկզբին շարք կմանի երևանի բիսկվիտի ֆարբիկան:

Գործող ձեռնարկություններում կավելանա շաքարի, բուսական յուղի, ձկան արտադրանքի, օճառի, պանակների և սիդարետների արտադրությունը:

Յոթնամյա պանով նախատեսվող արտադրական պրոցեսների մեքենայցման և ավտոմատացման լայն ծրագրի կնախագործումը, պրոցեսիվ տեխնոլոգիայի յուրացումը, մասնագիտացման և կոռուպերացման հետագա զարգացումը, աշխատանքի կազմակերպման մշտական բարելափումը թուզը կտան 1959—1965 թթ. ընթացքում Հայաստանի արդյունաբերության մեջ աշխատանքի արտադրողականությունը բարձրացնել 56 %-ով, այդ թվում ժողովնախորհին ենթակա արդյունաբերական ձեռնարկություններում՝ ավելի քան 58 %-ով:

Արդյունաբերության բուռն զարգացումը կըհանդիսանա ռեսպուբլիկայի բնակչության նյութական բարեկեցության և կուլտուրական մակարդակի հետագա բարձրացման կարևորագույն գործոններից մեկը:

Արդյունաբերության բանվորները, ինժեներատեխնիկական աշխատողները, ծառայողները և ին վճռողականությամբ՝ պարտիական կազմակերպությունների ղեկավարությամբ ապահովել յոթնամյա պլանի ժամկետից շուտ կատարումը և դրանով իրենց արժանի ներդրումը կատարել մերեկում կոմունիստական հասարակության կառուցման գործում: